

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՏԱՐԵՎԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի

ԵՐԵՎԱՆ - 2018

Նախարան

ՃՇՀԱՀ-ի Կրթության որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Որակի կենտրոն) 2018 թվականի տարվա սկզբից իրականացրել է իր գործունեությունը ըստ հաստատված Աշխատանքային պլանի (Հավելված 1), որը համահունչ է.

ա/ ՃՇՀԱՀ-ի 2015-2020 Ռազմավարական ծրագրով կրթության որակի ապահովման գծով նախատեսված հիմնախնդիրներին,

բ/ 2016-2018 թ.թ. ՃՇՀԱՀ-ի գործունեության բարելավման գործողությունների պլանով նախատեսված միջոցառումներին:¹

Իրականացված գործառույթները

1. Որակի կենտրոնի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի մշակման գծով՝ հրապարակվել է «Որակի ապահովում» ուսումնամեթոդական ձեռնարկը, որում ներկայացված են կրթության որակի ապահովման և այդ գործընթացներում ուսանողների ներգրավման մեթոդաբանության ընդհանուր դրույթներ, ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի որակի ներքին ապահովման հայեցակարգը, քաղաքականությունը, ընթացակարգերը և որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավումն ապահովող հետադարձ կապի մեխանիզմները: Ձեռնարկը նախատեսված է ՃՇՀԱՀ վարչական, ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանող կազմերի, ուսանողների, ասպիրանտների, ինչպես նաև որակի ապահովման համակարգի հետազոտողների համար:
2. AERES-ի հավատարմագրման գործընթացի շրջանակում կազմած 2015թ. Հաշվետվության պահանջներին համապատասխան «2016-2018 թ.թ. Բարելավման գործողությունների պլանի» իրականացման մշտադիտարկման գծով՝ իրականացվել է ՃՇՀԱՀ-ի միջին մասնագիտական քոլեջի և հինգ ֆակուլտետների ներքին աուդիտ:
3. Մարտ-մայիս ամիսների ընթացքում ՃՇՀԱՀ հինգ ֆակուլտետների ուսումնասիրություն , որի շրջանակներում.
 - Կազմվել են բոլոր ֆակուլտետների գործունեության հաշվետվությունները:

¹ Մշակվել է AERES Հետազոտությունների և բարձրագույն կրթության գնահատման գործակալության (Ֆրանսիա) 2014-2015 թ.թ.անցկացված գնահատման արդյունքների հիման վրա:

- Հանդիպումներ համալսարանի բոլոր դեկանների, դեկանի տեղակալների, դեկանատի անձնակազմի, ամբիոնների վարիչների, ուսումնասովանողական անձնակազմի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի (յուրաքանչյուր ֆակուլտետից 20 դասախոս) և ուսանողների հետ (յուրաքանչյուր ֆակուլտետից 30 ուսանող):
 - Ներկայացվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:
4. Ապրիլ-մայիս ամիսների ընթացքում իրականացվել է 2018 թվականի ՃՇՀԱՀ շրջանավարտների հարցում, որի նպատակն էր բացահայտել շրջանավարտների ընդհանուր բավարարվածությունը համալսարանի գործունեության վերաբերյալ: Հարցմանը մասնակցել են 440 ուսանող կազմվել է հաշվետվություն:
5. Մայիս ամսվա ընթացքում ուսումնասիրություն ՃՇՀԱՀ միջին մասնագիտական քոլեջում, որի շրջանակներում իրականացվել է.
- Դասավանդողների հարցում՝ (մասնակցել է 13 դասավանդող)
 - Ուսանողների հարցում (մասնակցել է 54 ուսանող)
 - **Բոլոր** մասնագիտական ուսումնական պլանների, դասընթացների ծրագրերի, թեմատիկ պլանների, դասավանդման մատյանների ուսումնասիրություն:
 - Ներկայացվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:
6. Հունիս ամսվա ընթացքում իրականացվել է Ինժեներական գեոդեզիա ամբիոնի աշխատանքների ուսումնասիրություն, որի շրջանակներում իրականացվել են .
- ամբիոնի գործունեության գնահատում՝ հարցմանը մասնակցել է 82 ուսանող
 - ամբիոնում դասավանդվող առանձին դասընթացների գնահատում՝ հարցմանը մասնակցել է 80 ուսանող,
 - Ներկայացվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:
7. Հունիս-հուլիս ամիսների ընթացքում իրականացվել է կատարված ավարտական աշխատանքների ստուգում, համեմատվել են իրականացված աշխատանքների թեմաները համապատասխան հրամաններով հաստատված թեմաների հետ: Հանձնաժողովը ստուգել է բոլոր հինգ ֆակուլտետների՝ 2017-2018 ուստարվա 817 շրջանավարտների ավարտական աշխատանքների թեմաների համապատասխանությունը:
8. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ամբիոնի գործունեության գնահատում, որի նպատակով իրականացվել են .
- Շրջայցեր ՃՇՀԱՀ 5-րդ մասիվում տեղակայված մասնաշենք և շախմատի սրահ,
 - Ամբիոնի դասախոսների փաստացի և իրական ծանրաբեռնվածության ստուգում:
 - հարցում՝ 200 ուսանողների շրջանում
 - Ներկայացվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

9. Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել է Կադրերի բաժնի կողմից իրականացված՝ համալսարանի վարչական աշխատողների գործունեության գնահատման արդյունքների ամփոփում: Մշակվել է հաշվետվություն և ներկայացվել է Կադրերի բաժնին:
10. «Նախագծերի կառավարում» համատեղ մագիստրոսական ծրագրի իրականացում, որի շրջանակներում արդեն 11 ուսանողներ գտնվում են Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանում:
11. Կրթության որակի ապահովմանն ուղղված միջազգային ծրագրերի նախաձեռնում՝ դիմում-հայտերի պատրաստում, դիմում.
 - ներկայումս պատրաստվում են մի քանի դիմում հայտեր ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող Erasmus+ ծրագրին դիմելու համար
 - պատրաստվել է “LANDAR” նախագծի դիմում-հայտը և դիմել ենք Horizon 2020-ին
 - միջին մասնագիտական կրթությանն ուղղված COMPRESS (European Commission) դիմում-հայտի ներկայացում 2-րդ փուլի համար (1-ին փուլն անցել էր):
12. Մեթոդական աջակցություն կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևավորման գործընթացին՝ Վերապատրաստման համար մշակված են դասավանդման նյութերի:
13. Վերապատրաստման դասընթաց ՃՇՀԱՀ-ի ակադեմիական անձնակազմի համար «Կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևավորում» թեմայով՝ Վերապատրաստված են 19 դասախոս, ներկայումս վերապատրաստվում է հաջորդ խումբը՝ 30 դասախոս:
14. Գործատուների հարցման հարցաթերթի մշակում և համաձայնեցում - Մշակված և համաձայնեցված հարցաթերթ - Հարցաթերթի նախագիծը ներկայացվել է ռեկտորին:
15. Դասալսումների անցկացում, որոնց վերաբերյալ առկա են դասալսողների փաստաթղթավորված անհատական գնահատականներ: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում իրականացվել է **18** դասալսում:
16. Կադրերի բաժնի և լրացուցիչ կրթության բաժնի հետ համատեղ իրականացվել է դասախոսների վերապատրաստման դասընթաց՝ ուսուցման ժամանակակից մեթոդների և դասապրոցեսի խաղայնացման վերաբերյալ:
17. Դասախոսների կրեդիտային գնահատման ընթացակարգի մշակում և քննարկում - Ընթացքում է:
18. Որակի կենտրոնի նախաձեռնությամբ բուհում հիմնվել է շարունակական կրթության համակարգը, որի գործունեության արդյունքում իրականացվել են են 2 դասընթացներ՝ Autodesk Revit՝ ճարտարապետների համար և Lira՝ շինարար-կոնստրուկտորների համար:
19. Մշակվել են բակալավրի ավարտական աշխատանքին և մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջները և գնահատման կարգերը:
20. Erasmus+ InnoCens ծրագրի շրջանակներում բուհում հիմնվել է նորարարությունների և ձեռներեցության աջակցման կենտրոն:
21. Դեկտեմբեր ամսվա ընթացքում կազմակերպվել է Որակի ապահովման ազգային կենտրոնի տարեկան մոնիտորինգային այցը ՃՇՀԱՀ:

Հավելված 1.

ՃՇՀԱՀ-ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

2018 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածի

Հաստատված է՝

Ռեկտոր՝ Գ. Գալստյան _____

« _____ » _____ 2018թ.

N:	Գործողություն	2018թ. ժամկետ	Պատասխանատու/ կատարող	Արդյունք/Գնահատման չափանիշ	Նշումներ կատարման մասին
1.	Որակի ապահովման կենտրոնի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի մշակում				
	- Որակի ապահովման կենտրոնի Կանոնակարգի վերահաստատում	փետրվար-դեկտեմբեր	Որակի կենտրոն	Հաստատված Կանոնակարգ	Ընթացքում է
	- Որակի ապահովման կենտրոնի Ձեռնարկի տպագրում	փետրվար-հուլիս	Որակի կենտրոն/Տպագրության և լրատվության վարչություն/ Կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչություն	Որակի ապահովման կենտրոնի Ձեռնարկ	Հրատարակված է
	- Որակի ապահովման կենտրոնի 2018թ. Գործողությունների պլանի մշակում և հաստատում	հունվար-փետրվար	Որակի կենտրոն	Որակի ապահովման կենտրոնի 2018թ. Գործողությունների հաստատված պլան	Կատարված է

Որակի կենտրոնի 2018 թվականի տարեկան հաշվետվություն

2.	Որակի ապահովման կենտրոնի վեբ էջի ձևավորում www.nuaca.am կայքում	սեպտեմբեր	Որակի կենտրոն/ Տպագրության և լրատվության վարչություն	Որակի ապահովման կենտրոնի բաժին բուհի պաշտոնական էլեկտրոնային կայքում	Ընթացքում է
3.	AERES-ի հավատարմագրման գործընթացի շրջանակում կազմած 2015թ. Հաշվետվության պահանջներին համապատասխան «2016-2018 թ.թ. Բարելավման գործողությունների պլանի» իրականացման մշտադիտարկում	շարունակական	Որակի կենտրոն	Հանդիպումներ հինգ ֆակուլտետների դեկաններին հետ՝ բարեփոխմանն ուղղված առաջարկների քննարկման նպատակով:	Պլանավորված գործընթաց
4.	Կրթության որակի ապահովմանն ուղղված միջազգային ծրագրերի նախաձեռնում, դիմում-հայտերի պատրաստում, մասնակցություն և իրականացում	հունվար-դեկտեմբեր	Որակի կենտրոն/Միջազգային հարաբերությունների բաժին	ա) HERITAG բ) InnoCENS գ) Valencia MD Program	Իրականացման ընթացքում են.
		հունվար-փետրվար		դ) HENECA Erasmus+	Հայտը ներկայացվել է մրցույթի – չենք շահել
		սեպտեմբեր-հոկտեմբեր		ե) Horizon 2020	Հայտը հավաքել է 6,5 միավոր (անցողիկ միավորը՝ 10), ներկայումս վերամշակվում է կրկին դիմելու համար – չենք շահել
				զ) COMPRESS (European Commission) – 1-ին փուլ	Շահել ենք 1-ին փուլը
5.	Բուհի ֆակուլտետների գործունեության մշտադիտարկում	Պարբերաբար	Որակի կենտրոն	Շարունակական մշտադիտարկում:	Հաշվետվությունը ներկայացված է

Որակի կենտրոնի 2018 թվականի տարեկան հաշվետվություն

6.	Մեթոդական աջակցություն կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևավորման գործընթացին	շարունակական	Որակի կենտրոն/Ուսումնական մաս/Կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչություն	Կրթական ծրագրի ձևավորված վերջնարդյունք	Վերապատրաստման համար մշակված են դասավանդման նյութեր
7.	Վերապատրաստման դասընթաց ՃՇՀԱՀ-ի ակադեմիական անձնակազմի համար «Կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևավորում» թեմայով		Որակի կենտրոն/Ուսումնական մաս/Կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչություն	Վերապատրաստված դասախոսների քանակ	Վերապատրաստված են 19 դասախոս, Ներկայում վերապատրաստվում է հաջորդ խումբը
8.	Ուսանողների գործառույթների գնահատման ընթացակարգի կիրառման գործընթացի մշտադիտարկում	սեպտեմբեր-շարունակական	Որակի կենտրոն/Կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչություն	Շարունակական մշտադիտարկում:	Կարգը հաստատվել է և կիրառվում է
9.	Ուսանողների կողմից դասընթացների գնահատում				
	- Շրջանավարտ-ուսանողների հարցման անցկացում	Մայիս-հունիս	Որակի կենտրոն	Հաշվետվություն:	Հաշվետվությունը ներկայացված է
	- Բակլավրիատի առաջին կուրս ընդունված ուսանողների հարցում	հոկտեմբեր	Որակի կենտրոն	Հաշվետվություն:	Ընթացքում է
	- Ասպիրանտների հարցում		Ասպիրանտական կրթական ծրագրերի բաժին/Որակի կենտրոն	Հաշվետվություն:	Հաշվետվությունը ներկայացված է
10.	Գործատուների հարցման հարցաթերթի մշակում և համաձայնեցում	հունիս	Որակի կենտրոն	Մշակված և համաձայնեցված հարցաթերթ:	Հարցաթերթի նախագիծը ներկայացվել է

Որակի կենտրոնի 2018 թվականի տարեկան հաշվետվություն

					ռեկտորին
11.	Դասալսումների անցկացում		Որակի կենտրոն/Ուսումնական մաս/Կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչություն	Անցկացված դասալսումների վերաբերյալ դասալսողների փաստաթղթավորված անհատական գնահատականներ:	Ընթացքում է
12.	Դասախոսների կրեդիտային գնահատման ընթացակարգի մշակում և քննարկում	սեպտեմբեր-դեկտեմբեր	Որակի կենտրոն/այլ ստորաբաժանույններ	Նախագծի քննարկում:	Ընթացքում է

Կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավար՝

Վ.Հովհաննիսյան

Կատարող՝

Ի. Վանյան,

Կրթության որակի ապահովման կենտրոնի գլխավոր մասնագետ